Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գրադարան Գ. Ալիխանյանի անվան
N 711
3 - 86

ՑՕՊԷԼԻՈՒՍ

ԱՐԾԱԹ ՄԱՆԷԹԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մանկական զրոյց

Թարգմանեց

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսիսի Վարդանեան
1904

8-93
Տ-86
ազ.
6506

Տ. ՏՕՊԼԻՈՒՄ

ԱՐԾԱԹ ՄԱՆԷԹԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊԵԼԱԿԱՆ ԳԱՂԱՐԱՆ
ԹԻՖԼԻՍ

Թարգմանեց

Գրիգոր Շահբուդաղեան

ԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏՓԽԻՍ
Տպարան Մովսէս Վարդանեանցի
1902

24 JUL 2013

344

Дозволено Цензурою Тифлисъ, 21-го Сентября 1902 г.

ԱՐԾԱԹ ՄԱՆԷԹԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԵՐԿԵՐ ՄԵՆԷԹԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ·

Նոր տարուայ նախընթաց գիշերը նստած իր առանձնասենեակում՝ Կարլոս-Դուստավը կարդի էր բերում դրամների ժողովածուն։ Նրան թէև չէր կարելի ժլատ երեխայ համարել, ընդհակառակն, նա պատրաստ էր նոյն իսկ վրայի շապիկը հանել և առաջին հանդիպած աղքատին բաշխել, բայց նա սիրում էր հին դրամներ, որ արդէն մի տարի շարունակ հաւաքում էր։ Երբեմն այդպիսի դրամներ ընծայ էր ստանում, երբեմն գնում էր փողով։

Նրա ունեցած դրամների մեծ մասը պղնձեայ ժանգոտած դրամներ էին, բայց Կարլոս Դուստավը այնպէս մաքրում էր, որ նրանք փայլում և գեղեցկանում էին։ Նրա ժողովածուի մէջ կային ԿԱՐԼՈՍ II-ի ժամանակի դրամներ՝ զանազան տարօրինակ նկարներով։ Կային և ուրիշ աւելի հնագոյնները նոյնպէս տարբերակրեայ դրամներ զանազան նշանաբաններով։ Կային մօտ հինգ վեց զուտ արծաթէ դրամ, որ ընծայել էին երեխային նրա ծննդեան կամ ուրիշ հանդիսաւոր օրերի առթիւ։ Եւ

ահա, այժմ նա նստած էր, ինչպէս վերը յիշեցինք, հէնց Նոր Տարուայ նախընթաց գիշերը և տեղաւորում էր իւր գանձերը դրամարկղում, որն առանձին յարմարեցրած էր ժողովածուի համար և ունէր զանազան բաժանմունքներ։

Նա մի դրամ էլ ունէր, որին նայելիս չէր կըշտանում. սա մի արծաթեայ հռովմէական դրամ էր, Ներոն կայսեր ժամանակից մնացած, որ ընծայ էր ստացել իւր պապից։ Այդ դրամը շատ փոքրիկ էր և բոլորովին մաշուած, բայց այնուամենայնիւ կարելի էր որոշել բռնաւորի պատկերը։ Կարլոս-Գուստավը շուռ ու մուռ էր տալիս իւր գանձը և զարմանում, թէ ինչպէս կարող էր մի այդպիսի փոքրիկ արծաթեայ կտորն այդքան երկար ապրել աշխարհումս. եթէ սա խօսելու լինէր, մտածում էր նա, ապա որքան հետաքրքիր բաներ կարելի էր լսել սրանից։ Բայց դրամիկն ընկած էր սեղանի վրայ հանգիստ և շարունակում էր լռել, իսկ անշարժ նստած մանուկը մըտածում էր, թէ ինչքան պէտք է երկար ապրած լինի նա և ինչ բաներ անցած պէտք է լինին նրա դէմը։ Յանկարծ նրան թուեցաւ, որ նրա գանձն անսովոր կերպով փայլեց և յանկարծ լսուեց ժամացոյցի հնչիւնների նման մի ձայն. նա ականջ դրեց և դրամն իրաւ որ սկսեց բառեր արտասանել, առաջ շատ կամաց, անորոշ, ապա աւելի ու աւելի բարձր, և աւելի ու աւելի պարզ։

Նա նստել էր քարացած և լսում, անկարող լինելով ինքն որ և է խօսք արտասանելու։ Այնինչ արծաթէ դրամիկն սկսեց պատմել այն բոլորը, ինչ որ իւր գոյութեան սկզբից, Ներոն կայսեր ժամանակներից պատահել էր և ահա թէ ինչ էր ասում նա.

«Ընդէն բաղխեց տասներկու ժամը, հասաւ Նոր Տարին և մարդիկ հաշւում են 1858 թիւը Քրիստոսի Ծննդից յետոյ։ Մենք դրամներս, բոլորս էլ անհաւատ ենք, և ծառայում ենք աշխարհումս թէ բարի և թէ չար գործին։ Այն արծաթը, որից ինձ պատրաստեցին, բերուած էր հնումը Իբէրիայի լեռներից՝ այն երկրից, որն այժմս անուանւում է Իսպանիայ։ Ճիշտ 1800 տարի է անցել այն օրից, ինչ որ ինձ կտրեցին Հռոմում և ինձ իրաւունք է տուած խօսել իւրաքանչիւր 100 տարին մի անգամ։

«Ես քեզ չեմ պատմիլ իմ անձնական արկածներիս մասին, ես երբեմն բաւական երկար ժամանակով թաղուած էի մնում գետնում. երբեմն գտնւում էի ժլատի մօտ, երբեմն հարստի քսակում և երբեմն էլ աղքատի դատարկ գրպանում։ Բայց այդ միևնոյն է. մարդիկ սերունդէ սերունդ անհետանում են, իսկ արծաթն ու փողը երկար են մնում ու ապրում։ Բայց այնուամենայնիւ, ես նախանձում եմ մարդոց. երբ սկսում ես խորը մտածել, ապա տեսնում ես, որ մարդիկ անմահ են, իսկ փողերը ոչ։ Երբ ոսկին, արծաթը, և բոլոր երկրաւոր գանձերը չքանում են,

մարդուս հոգին շարունակում է ապրել յաւիտենականութեան մէջ։ Բաղդն ինձ այստեղ բերեց և ես կուզեմ քեզ պատմել դարէ-դար այն բոլորը, ինչ տեսել եմ մարդոց մէջ 58 թուականից սկսած՝ հէնց այն րոպէից, երբ ես խօսելու կարողութիւն ստացայ։ Երբ որ ինձ նման նիրհում ես հարիւր տարի շարունակ, այն ժամանակ կամենում ես թեթևացնել, պատմել ուրիշին սրտինդ և խօսել. այդ պատճառով ես էլ ուզում եմ խօսել հետդ, լսիր ինձ.

I

1758 թ. Պրուսիոյ մեծ մարաջախտ և արքայ ՖՐԻԴԵՐԻԿՈՍ II-ը նստած էր Ըլէզվիգում իւր վրանում։ Նա հէնց նոր էր արիւնահեղ յաղթանակը տարել աւստրիացիների դէմ Լէյտենի մօտ։ Թաղուել էին անթիւ, անհամար անմեղ զոհեր, իսկ կենդանի մնացածների վէրքերից հոսում էր արիւնը. այրիները լալիս էին, որբերը կորցրել էին իրենց յոյսն ու ապաւէնը, բայց քաջարի արքան տրորելով իւր արիւնոտ ձեռքերը, նայում էր դրասեղանի վրայ իւր առաջ դրած Ըլէզվիգի քարտէսին. «Այս երկիրն այժմ ինձ է պատկանում, ասում էր նա»։ Նա այդ րոպէին մոռանում էր, որ այդ երկիրն անցել էր նրա ձեռքն անիրաւութեամբ, մարդկային արեան գնով, բայց արդեօք ինչ չի մոռանալ մարդս, երբ յաղթանակի ու փառքի ծարաւը տիրէ նրան։ Աշխարհը փառաբա-

նում էր արքայի յաղթանակը, իսկ պալատականներն անուանում էին նրան «*Միակ անյաղթելին*»։ Ես պառկած, թաղուած էի հողում և լսում էի այնտեղից նրա խղճի ձայնը, որն ասում էր. «Անիրաւ է, անիրաւ. մեղաւոր է Աստծու և մարդկանց առաջ»։

II

1658 թ. Անգլիոյ լիազօր հովանաւոր ՕԼԻՎԷՐ ԿՐՕՄՎԷԼԸ պառկած էր մահուան մահճում։ Նրա շուրջը կանգնել էին նրա հաւատարիմ բարեկամներն ու թափում էին կեղծ արցունքներ. հէնց նրա մահճակալի մօտ գտնուում էր նրա միակ որդին, որը հոգւով ուրախանում էր հօր մահուանը՝ անհամբեր սպասելով իշխանութիւնը ձեռք առնելուն։ Մեծն Կրոմվէլը իւր կենդանութեան միջոցին միշտ *հոգին ծռում էր*, բայց ամենքից համարուած էր իբրև բարեպաշտ մարդ։ Այժմ, երբ կեանքը թողնում էր նրան, նա յիշում էր իւր սարսափելի մեղքերը և այն դաժան ոճրագործութիւնը, որ գործել էր, աջակցելով իւր թագաւոր ԿԱՐԼՈՍ I-ի գլխատման գործին։ Թէև Կրոմվէլը իւր կեանքի բազմազան դիպուածներում իմաստուն կառավարիչ էր եղած, բայց նա իւր կեանքի վերջին րոպէներում միայն իմացաւ, որ նրա արարմունքները հաճելի չեն Աստծուն և թէ այն իշխանութիւնը, որին նա այնքան ծարաւի էր և դէպի որը ձգտում էր հասնել, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ օճարէ փամփուշտ։ Ես թա-

ղուած էի գետնում, բայց ինձ հասնում էր նրա խրդ-
ճի ձայնը՝ որն ասում էր. «Անօրէն է, անօրէն Աստ-
ծու և մարդկանց առաջ»։

III

1558 թ. Մի ուրիշ մեծ մարդ, որ իւր ժամա-
նակին իշխում էր ամբողջ աշխարհի վրայ և որին
իւր թագաւորութեան միջոցին ամեն ինչ ծպտու-
էր, ընկած էր այժմ առանց իշխանութեան, ամենից
մոռացուած՝ մահուան մահճում Իսպանիոյ Էստրամա-
դուրա վանքում։ Սա ԿԱՐԼՈՍ Ե էր, Հռոմայեցոյ
կայսրը, Իսպանիոյ և երկու Հնդկաստանի արքան, նա
որին այժմ ամեն ինչ զզուելի էր դարձել—և իշխանու-
թիւն և յաղթանակ, և որը, գահից հրաժարուելով,
դարձել էր հասարակ աբեղայ Ս. Յուստինիանոսի վան-
քում։ Նրա շուրջը կանգնած էին աբեղաները մոմե-
ը ձեռներին, աղօթքներ էին մրմնջում և փառաբա-
նում նրա քաջագործութիւնները և նրա բարեպաշտու-
թեամբ անցուցած կեանքը։ Բայց մահամերձ միա-
պետը համոզուած էր, որ նրա անցուցած կեանքն
արդար չէր, նա լռում էր և հետևում էր ժամացոյ-
ցին։ Իշխանութիւնը, փառքն ու բոլոր երկրաւոր գան-
ձերը, որից նա յոժարակամ հրաժարուել էր, չէին
զոհացնում նրան։ Նա յիշեց, թէ ինքն ինչպէս հա-
լածում էր Լիւտէրին, և թէ ինչպէս իրաւունք էր
տուել իսպանացիներին ոչնչացնելու թշուառ հնդիկ-

ներին Մեքսիկայում և Հռոմի բարեպաշտ աբեղանե-
ի դովեստները չէին կարողանում խաղաղացնել նրան։
Ես պառկած էի գետնի տակ, բայց լսում էի նրա
խղճի ձայնը, որ ասում էր. «Անօրէն է, անօրէն Աս-
տծու և մարդկանց առաջ։

IV

1458 թ. ԴՈՆ-ՀԵՆՐԻԿՈՍԸ՝ Պորտուգալիոյ գահա-
ժառանգը նստած էր իւր Տէրցանաբալ ամրոցում
և լսում այն նոր համբաւները, որոնք պէտք է փո-
փոխէին աշխարհս։ Նա իմացաւ, որ հիւսիսում, Մայնց
քաղաքում յայտնուել է հռչակաւոր Գուտտէնբերգը,
տպագրութեան հնարողը։ Արևելքից նա համբաւ ըս-
տացաւ Թուրքերի սարսափելի յարձակման մասին,
որոնք հինգ տարի առաջ տիրել էին Կոստանդ-
նուպոլսին, և յոյն ուսումնականների փախուստը,
որոնք իրենց իմաստութիւնը տարածեցին Արև-
մուտքում։ Հարաւից Դոն-Հենրիկոսը տեղեկացաւ, որ
իւր նաւը հասել է մինչև Գվիննէա, մինչև Աֆրիկա-
յի արևելեան ափերը, որ մինչև այդ ժամանակ կա-
տարուած ճանապարհորդութիւններից ամենաերկարն
էր։ Վեհանձն և իմաստուն արքան նայեց իւր պա-
լատի պատուհաններից դէպ Ատլանտեան ովկիանոսը,
շարժեց ալեզարդ գլուխն ու ասաց. այնտեղ, այս
ովկիանոսի ետև պէտք է երկիր լինի, հմ, եթէ վի-
ճակուէր ապրել ինձ՝ մինչև այդ երկրի գիւտը շատ

երջանիկ կը լինէի։ Իսկ ես, արծաթ դրամս, էլ
պառկած էի գետնի տակ, բայց և՛ լսում էի, թէ ին
պէս ովկիանոսի կապոյտ ալիքները պատասխանու
էին գահաժառանգի հառաչին. այո՛, այո՛, այնտեղ ե
կիր կայ,—այնտեղ Ամերիկան է։ Իսկ այդ ժամանա
Քրիստափոր Կոլումբոսը դեռ ուսանում էր Ջենովա
դպրոցում։

V

1358 թ. Այդ ժամանակ ես պառկած էի ասպ
տի դրամարկղում։ Նա զրահաւորուեցաւ իւր փառա
հեղ զրահով և հեծնելով իւր նժոյգը՝ գնաց ձիարշա
ւը։ Արշաւատեղի շուրջը շինուած էր ծիրանիդ
ծածկուած պատնէշ. իսկ նրա ետևը գտնուում էի
հանդիսականների համար պատրաստուած տեղերը
Ասպետը հրամայեց, որ տասներկու եզներ հաւասա
բացնէին գետինը, որի վրայ նա հրամայեց դարձ
ստել երեք հազար արծաթ դրամ. ես էլ այդ
դրամների մէջ էի գտնուում։ Շատ կտրիճ ասպետներ
ասպարէզ ելան և իրար վրայ յարձակուեցան. նրանց
տէգերը շողշողում էին արևի ճառագայթներից
շատ քաջ մարտիկներ գետին էին գլորուում։

Արքաներն ու իշխանները նայում էին այս տե
սարանին և զեղեցկուհիները ամեն կողմերից թաշկի
նակի հովահարելով՝ քաջալերում էին մարտիկներին։

Դրօշակները ծածանուում էին օդում, փողերը

նչում էին, սաղաւարտները շողշողում արևի ճառա-
գայթներից։

Բայց այս բոլորը լոկ միայն խաղ էր. մարդիկ,
ռ հասարակ, մեծ երեխաներ են և ամեն մի դա-
աշրջան ունի իւր խաղալիքները։

VI

1258 թ. Ես հանդստանում էի թափառաշրջիկ
անրավաճառի քսակում։ Նա ապրանք էր տանում
դաշալի լայնածաւալ Բէյնի վրայով. խաղողի այ-
գիներն իրեն թարմ կանաչով զարդարում էին այս
տի գեղանկար ափերը։ Բնութիւնը հանդարտ էր,
արևը պայծառ փայլում էր և լուսաւորում ասպետի
ալատը։ Աշուղը երգում էր մի հրաշալի երգ և մա-
ղահաս չքնաղ աղջիկը լսում էր նրա երգը, կանգ-
ած ամրոցի բաց պատուհանի մօտ։

«Նաւի վրայ գտնուում էր մի աբեղայ, որի երե-
գոյնը նոյնպէս սև էր, ինչպէս և նրա անունը,
ան կոչում էին Բէրտօլդ Ձվարց։ Նա ցոյց էր տա-
ս մանրավաճառին մի սև փոշի, որը դեռ աշխար-
ին անծանօթ էր։—Տես, ասում էր նա. այս փոշին
ոյլին ու հզօրին հաւասար կը դարձնէ։ Ուրեմն այդ
նչ է, հարցրեց մանրավաճառը։—Այս վառօդ է,
ատասխանեց աբեղան և այս ասելով տարօրինակ
պտաց, կարծես թէ վաղուց նախազուշակում էր,
ինչ աղմուկ պիտի հանէ աշխարհումս նրա գիւ-

տը։ Մինչդեռ նրանք խօսում էին, նաւին մօտեցա
մի մակոյկ լիքը վայրենի աւազակներով. այդ ժա
մանակներում ասպետական ամրոցները լի էին դը
ռանցով։ Վայրենի մարդիկ մանրավաճառին բանտ
նստացրին, աւար առան նրա ապրանքը և ստիպե
ցին նրան դեռ մի ահագին փրկանք էլ վճարելու իւ
կեանքն ազատելու համար։ Բռնութիւնը դերազանցու
էր, բռունցքն ամենազօրեղն էր, ուստի և այդ ժամա
նակն էլ կոչվում էր «բռունցքի ժամանակ»։

VII

1158 թ. Ֆինլանդիայում քրիստոնէութիւնը քա
ռոզող ՀԵՆՐԻԿՈՍ եպիսկոպոսը ճանապարհորդում է
Սատակունդի անապատով իւր աբեղաներով ու սպա
սաւորներով։ Քաղցելով, ճանապարհորդները կերա
կուր խնդրեցին հարուստ կալուածատէր Լալլիից
Նա տանը չէր, իսկ նրա չար կին Կէրտուն չէր կա
մենում կատարել նրանց խնդիրը։ Այն ժամանակ ե
պիսկոպոսը փող վճարեց հացի և գարու համար։ Ես
այն դրամներից մէկն էի, որն ստացաւ Կէրտուն։ Նը
ռանք շարունակեցին ճանապարհը. բայց երբ Լալլի
վերադարձաւ տուն, նա շատ զայրացաւ։ Ձեշտակի
վրայ հասնելով եպիսկոպոսին՝ նահատակեց նրան Շիւլլ
լճի ափին։ Մի քանի ժամանակ անց՝ ես տեսայ Լալ
լիին տուն վերադառնալիս. երբ նա գլխարկը հա
նեց—նրա գլխի մազերը թափուեցան։ Ես հասկա

այ, որ նա ոճիր է գործել և այն ժամանակից խիղ
ը միշտ տանջում էր նրան։ Իսկ Հենրիկոս եպիսկոպո
ը իւր մահից յետոյ բարի յիշատակ թողեց նրանով,
ը քարոզեց քրիստոնէութիւնը Ֆինլանդիայում։ Եօթը
արիւր տարի է անցել նրա մահուանից և Յունուարի
9-ին տօնւում է Ս. Հենրիկոսի տօնը, հէնց այն օրը,
ը նա նահատակուեցաւ։

VIII

1058 թ. Այդ թուականին ես պառկած էի Հռով
ում, պապի պալատում։ Այնտեղ ՀԻԼԴԷԲՐԱՆԴՏ ա
ունով մի աբեղայ կար, որը կամենում էր պապին
համայն աշխարհի միահեծան տէրը դարձնել։ Յա
ախ ես լսում էի խղճի ձայնը, որը թելադրում էր
աբեղային, թէ Աստուծոյ թագաւորութիւնն այս աշ
խարհումս չէ. բայց Հիլդէբրանդտը պատասխանում էր
ւր խղճին. մի՞թէ դու չես տեսնում, որ աշխարհս
ի է մեղքերով ու արիւնհեղութեամբ։ Կայսրներն ու
թագաւորները ոչնչացնում են իրար, իսկ ասպետ
երն աւարի են առնում եկեղեցիները։ Հէնց նորա
համար էլ պապին պէտք է գերիշխան հրատարակել
ոլորի վրայ, որպէս զի մարդիկ դադարէին պատե
ազմելուց Դաւիթի նման Իսրայէլի Աստծու դէմ
յուսային միայն իրենց ոյժի և իրենց զէնքի վրայ։
Երկար մաքառելուց յետոյ վերջապէս յաջողուեցաւ
Հիլդէբրանդտ աբեղային հասնել իւր փափագին, և ին.

ը պապ դարձաւ, ամենահզօրագոյն պապերից մի-
նը, որպիսիք երբեւիցէ գոյութիւն են ունեցել։ Վեր-
ջը յայտնուեցաւ Լիւտէրը, պապի իշխանութիւնը
նուազեց և նրա նախկին վեհութիւնն անյայտացաւ։

IX

958 թ. ՕՏՏՕՆ Մեծ Կայսրը, բոլորովին ջար-
դելով Հունգարներին Աուգսբուրգի պատերազմում,
ճանապարհորդում էր իւր թագաւորութեան մէջ,
Գերմանիայում, արդարադատութիւնը վերականգնե-
լու համար։ Թագաւորները ու իշխանները խոնարհ-
ւում էին նրա զօրութեան առաջ և նրա իշխանու-
թիւնը տարածւում էր ամբողջ Եւրոպայում։ Ես այն
ժամանակ պառկած էի նրա դանձերի մէջ։ Մի ան-
գամ ես տեսայ, թէ ինչպէս նա մտաւ իւր ննջարա-
նը և թախծալից խոնարհելով գլուխը՝ ծունկ չոքեց
Փրկչի պատկերի առաջ աղօթելու, համարելով իրան
իբրև ամենաանարժանը բոլոր մարդկանցից։ Նա նոր
էր խմացել, որ իւր սիրելի որդի Ռուդոլֆը մեռել էր
ծաղիկ հասակում և մտածում էր. «Ի՞նչ է իմ իշխա-
նութիւնը Աստուծոյ իշխանութեան առաջ։ Ես ամենա-
հզօրն եմ բոլոր մահկանացուներից, բայց չնայելով
այս ամենին, ես մի անզօր արարած եմ, որին Տէր
Աստուածը ամեն մի օր և ամեն մի ըոպէ կարող է
հող դարձնել»։

X

858 թ. Մի անգամ պատահմամբ ընկայ Ֆրան-
սիոյ ծովեզրեայ ծաղկափթիթ ափերից մէկի վրայ
գտնուող մի վանքի դանձանակը։ Արեգանները աղօթում
էին՝ «Թշնամեաց յարձակումներից փրկիր մեզ, Տէր»,
բայց Տէրը չլսեց այս անգամ նրանց աղօթքը, որովհետև
այդ արեգանները, երևի, Աստծուն դուրեկան կեանք
չէին վարում։ Նրանք դեռ չէին վերջացրել իրենց ա-
ղօթքը, որ ծովեզրը հասան հիւսիսային վայրենի աւա-
զակները։ Նրանք յարձակուելով վանքի վրայ, այրեցին
այն, ամայացրին ամբողջ տեղը և իրենց հետ հիւ-
սիս տարան վանքի բոլոր դանձերը։ Այդ ժամանակ
ազատուած արեգաններից մինը կանգնած էր ծով-
եզրին և նայում էր հեռացող նաւի առագաստին։ Նա
երկիւղածութեամբ խաչաձև ձեռքերը կրծքին դրեց
և աղօթեց. «Տէր, մենք բարկացրինք քեզ, ուստի և
արժանի ենք պատժի, բայց գոնէ փրկիր մեր սե-
բունդը թշնամու յարձակմունքներից և արժանի արա
քո աչակերտ Անդրարիային քարոզելու խաղաղու-
թիւնն ու Աստուծու օրհնութիւնը հիւսիսում։ Այդպէս
էլ կատարուեցաւ։

XI

758 թ. Շոտլանդիոյ վանքերի մութ խցերից
մէկում նստած էին երկու արեգայ։ Նրանք

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ֆ.Հ. Публичная Библиотека
7/XI—1922
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

գեղեցիկ տառերով գրում էր կաշուէ թերթի վրայ, որ մաղաղաթ է ասւում, միւսը հրաշալի նկարներ էր նկարում գրքի մէջ, որի արտագրելը նոր էր աւարտել։

Ես պառկած էի արեղաների փոքրիկ արկղիկի մէջ. ինձ բերել էին այստեղ ուրիշ դրամների հետ միասին, որոնցով գնել էին քրիստոնէական Ս. Գրքերից մէկը։ Ես աւարտեցի «Կիկերոնը», ասաց արեղաներից մէկը.—հետաքրքիր է կարդալ այն, ինչով գրում էին հին հեթանոսները. նրանք ապրում էին խաւարում և չէին ճանաչում Քրիստոսին։—Այո, պատասխանեց միւս արեղան, բայց Աստուծու խօսքը գերազանցում է ամենին։ Տես, այժմ ես նկարում եմ հրաշալի նկարներ այս գրքում, ուր որ արտագրեցի չորս Աւետարանները։ Անագին չարչարանք է գիրք արտագրելը, իսկ այս գիրքն արժէ երկու հարիւր արծաթ մանէթ, սակայն սա մարդոց մեծ բաւականութիւն է պատճառում։

Արդեօք երբ պիտի գայ այն ժամանակը, երբ պէտք չի լինիլ անպատճառ հարուստ լինել, որպէսզի գնէիր Աստուծու խօսքը։—Համբերութիւն ունեցիր, պատասխանեց առաջին արեղան. այդ ժամանակն էլ կըգայ, թէև ես ու դու չենք տեսնիլ, չէ՞ որ Ս. Գրքում ասուած է՝ «Աւետարանը քարոզւում է աղքատների համար»։

XII

658 թ. Ուազոտ անապատով անցնում էր մի զօրաբանակ. զօրականների երեսները սև էին, սպիտակ չալմաները գլխին, մի քանիսը ուղտերի վրայ էին նստած, միւսները գնում էին ոտքով։ Արևն անողորմաբար այրում էր, և հեղձուցիչ տաք քամին փչում էր ամեն տեղ։ Մարդկանցից շատերը շոգից ու ծարաւից թուլանալով՝ ընկնում էին, մնացածներն առաջ էին գնում և երբ նրանց առաջարկում էին հանգստանալ, նրանք պատասխանում էին. «Դրախտի մէջ կը լինի հանգստութիւնը»։

Այն ժամանակ նրանց խալիֆ Ալին, մօտենալով առաջաւոր գնդերին, գոչեց... «Կայ միայն մէկ Աստուած և Մոհամմէդը նրա մարգարէն»։ Ամենքը գետին ընկան և սկսեցին աղօթել, երեսները դէպի արևելք՝ դէպի Մեքքա սուրբ քաղաքը դարձրած։ Ապա նրանց դէմ առ դէմ եկան թշնամու զօրքը, որը կամենում էր իւր երկիրը պաշտպանել։ Խալիֆը իւր ժողովրդով յաղթեց թշնամուն և սպառնում էր ամենին, ով չէր կամենում դաւանել Մոհամմէդին։ Նրանք ասպատակում և ամայացնում էին քաղաքները, և ինձ էլ դատն գանձերի մէջ։ Անդաղրում առաջ ընթանալով, նրանք բոլոր աշխարհքն ուզում էին Մահմէդի կրօնի դարձնել։ Տէր Աստուածն արգելեց նրանց հեռուն գնալ, նրանց վարդապետութիւնը հնա-

ցաւ և կորցրեց իւր ոյժը, որովհետև նա երկրային էր։ Բայց քրիստոնէութիւնը երկնքից իջաւ, ուստի և նա երբէք չի ընկնիլ և երբէք չի հնանալ»։

XIII

558 թ. Բոսֆորի կապոյտ ալիքների ափերին շողշողում էր Սոֆիայի տաճարի ոսկէ գմբէթը։ Կայսր Յուստինիանոսը բազմած իւր գահի վրայ, ընդունում էր իւր հպատակ ժողովուրդներից ուղարկուած հարկերը։ Հարուստ Ասիայից ուղարկուած ոսկին ժողովուած էր մեծ անօթների մէջ. երբեմն հպարտ Հռովմից ուղարկուած էր փոքրիկ անօթ արծաթէ դրամներով. ես գտնուում էի այդտեղ և լսեցի, ինչպէս կայսրն ասաց. «Ո՞ւր գնաց Հռովմի նախկին փառահեղութիւնը։ Այս չնչին հարկը պիտի ստացուի Հռովմից»։ «Մեծդ արքայ, պատասխանեց դեսպանը.—վաղուց է անհետացել Հռովմի փառահեղութիւնը։ Բարբարոսները թալանեցին նրա գանձերն ու այրեցին նրա պալատները»։

Կայսրը տհաճութեամբ երեսը դարձրեց դեսպանից և տեսաւ երկու արեղայ, որոնք գաւազանները ձեռքին մօտենում էին նրան։ Նրանք ծունկ խոնարհեցան թագաւորի առաջ և մատուցանելով գաւազանները, ասացին. «Արքայ. մենք խնդրում ենք քեզ նայել այս գաւազաններին և ընդունել այն, ինչ դրանք պարունակում են իրենց մէջ»։ Կայսրը հրամայեց

բանալ գաւազանները և տեսաւ, որ նոքա լի էին շերամի մանրիկ ձուիկներով։ Կայսրը դէմքը զուարթացաւ և դառնալով արեղաներին՝ ասաց. «Դուք լաւ էք արել, որ բերել էք արևելքից շերամի ձուաները. ես կը հրամայեմ պարգևատրել ձեզ դրա համար. այժմ մենք կարող ենք ինքներս պատրաստել մետաքսեայ գործուածքները և չենք գնիլ այն, ինչպէս առաջ, ագահ պարսիկներից»։

Թագաւորն ու բոլոր նրա ժողովուրդը զովում էին արեղաներին իրենց օգտակար ընծայաբերութեան համար։ Մարդոց իշխանութիւնն անցաւոր է, և մեծ հերոսներն յաճախ թողնում են իրենցից յետոյ միմիայն աւերակներ, մինչդեռ խաղաղ գիտերն ու ձեռնարկութիւնները, որոնց նուիրում են մարդիկ իրենց աշխատանքը. անկասկած աւելի արդիւնաւէտ են լինում, և տալիս են աշխարհին մեծ բարիք։

XIV

458 թ. Վայրենի մարդոց ահագին բազմութիւն որոնց ՀՈՆԵՐ էին անուանում, վերադառնում էր իրեն աւերակ դարձրած Եւրոպայից - արևելք։ Ես գտնուում էի նրանց կողոպտած գանձերի մէջ։ Նրանք ամայացրին ահագին տարածութիւններ ամենաբարեբեր երկրներում, այնպէս որ չը մնաց ազատ գրեթէ ոչ մի գիւղ նրանց աւարառութիւնից։ Նրանք նոր

էին թաղել իրենց թագաւոր Ատիլլային մի գետի խորքում։

Արևը լուսաւորում էր աւերակ դարձած երկիրը. Հոներն իջան ձիաներից, որ հանգստանան և իրենց համար կերակուր պատրաստեն։ Նրանք հանեցին իրանց թամբերի տակից հում միս և սկսեցին ուտել. առհասարակ նրանք շատ քիչ էին իջնում ձիաներից և մինչև անգամ գիշերը ձիաների վրայ էին քնում։ Մինչդեռ նրանք կանաչ խոտի վրայ նստած ուտում էին, անտառից յարձակուեցան նրանց վրա գերմանական ցեղին պատկանող Վէստգոթները և ջարդեցին Հոներին՝ մինչև վերջին մարդը։ Հենց միայն նոր էին դադարել Վէստգոթները պատերազմելուց, որ նրանց վրայ, ըստ կարգին, յարձակուեցան Բուրգունդները և յաղթեցին նրանց։ Երբ Բուրգունդներն արդէն մտածում էին որ իրենք զերծ են վտանգից, նրանց վրայ յարձակուեցաւ գերմանական երրորդ ցեղը՝—Սվէվները, որոնք նրանց գերի առան և տարան իրենց հայրենակից Ռիցիմէրի մօտ, որ այդ ժամանակ իշխում էր Հռովմում։ Ո՞ր կողմը գնանք մենք, հարցնում էին Հենզէրիխի հպատակները։ Թող քամին տանի մեր նաւատորմիղն այն կողմը, որն արժանացել է երկնային բարկութեանը, պատասխանեց արքան և ահա՛ նրանք նաւերը մօտեցրին Իտալիոյ ափերին։ Այս բոլորը դէպք եղաւ տեսնել ինձ, խեղճ արծաթէ դրամիս, բարբարոսների ձեռքից

ձեռք անցնելով։ Նրանք աւերակ էին դարձնում աշխարհս և ոչնչացնում միմեանց. այդ մի սարսափելի ժամանակ էր, երբ մէկ ժողովուրդ սրի էր անցնում միւսին և չունէր ընակութեան որոշ տեղ։ Բայց Տիրոջ արևը լուսաւորում էր նրանց. այս անթափանցելի խաւարում, այս աշտարակաշինութեան և խառնակութիւնից յետոյ՝ վերածնուեցան նոր ժամանակները և նոր մտքեր։ Բոլոր հինը անհետացաւ, քրիստոնէութիւնն աշխատում էր դարերով և դարձրեց բարբարոսներին, բո նախնիքներին՝ լաւ և կրթուած մարդիկ։

XV

358 թ. Այդ ժամանակներում ես մի մարդ տեսայ, որին անուանում էին ՅՈՒԼԻԱՆՈՍ և ես ընկած էի նրա դանձերի մէջ։ Նա կուսակալ էր Գալլիայում որ այժմ անուանւում է Ֆրանսիա։ Վերջը նա դարձաւ ամբողջ Հռովմայեցւոց կայսրութեան տէր։ Նա ապրում էր այնպիսի մի ժամանակ, երբ բարքերը շատ ապականուած էին, բայց և այնպէս նա առաքինի մարդ էր։ Նա մի մեծ պակասութիւն ունէր. նա հեթանոս էր և չէր հաւատում Քրիստոսին, թէպէտ և Աստծու խօսքը արդէն քարոզուել էր ամբողջ երկրում։ Նա երկրպագում էր Արամազդին և ուրիշ հեթանոս աստուածներին։

«Մի անգամ իւր մօտ կանչելով մի հրէայ և մի

քրիստոնեայ, նա հարցրեց նրանց. «Ի՞նչ են ասում ձեր մարգարէները Երուսաղէմ սուրբ քաղաքի տաճարի մասին»։—Հրէան պատասխանեց. «Մեսիան կը կառուցանի այն»։—Իսկ քրիստոնեան պատասխանեց. «Երբէք չի վերանորոգուիլ Երուսաղէմի տաճարը իր նախկին փառահեղութեամբ, որովհետև Փրկիչն ասաց. «Չի մնալ քարը քարի վրայ, որ չը քանդուի»։—«Ես նորից կը կառուցանեմ տաճարն, ասաց Յուլիանոսը և կապացուցանեմ ձեզ, որ մարգարէութիւնը սուտ է»։ Երբ Յուլիանոսը կայսր դարձաւ, նա հրամայեց ժողովել հարիւրաւոր բանուորներ և նորից կառուցանել Երուսաղէմի տաճարը։ Սկսուեցաւ շինութիւնը և կայսրը հոգւով ուրախանում էր, որ նրան յաջողւում է հերքել Փրկչի խօսքը։ Բայց յանկարծ մեծ երկրաշարժ եղաւ, կրակը երևեցաւ գետնի տակից. բանուորները թողին գործիքներն ու փախան։ Յուլիանոս կայսրը վախեցաւ և զարմացաւ, իսկ մեր Փրկչի խօսքը կատարուեցաւ։

XVI

258 թ. Այս ժամանակներում սարսափելի անկարգութիւններ էին տիրում ամբողջ Հռովմայ կայսրութեան մէջ. բարբարոսներն յարձակւում էին նրա վրա ամեն կողմից և սպառնում էին աւերակ դարձնել ամբողջ կայսրութիւնը։ Այդ միջոցին Վալէրիանոս կայսրը հալածում էր քրիստոնեաներին։

Ափրիկայի ափերին, Կարթագէնում մի քրիստոնէական եկեղեցի կար։ Ագնուատոհմ, մատաղահաս հռովմայեցի օրիորդ Պլացիդիան կայսեր Թիկնապահի դուստրը—տարաւ ինձ իւր հետ քրիստոնէական տաճարը, ողորմութիւն տալու աղքատներին։ Հէնց այն միջոցին, երբ նա ծունկ խոնարհած աղօթում էր Փրկչին, որ նա օգնէր իրան դառնալ դէպի ճշմարիտ հաւատը, նրա հօր ուղարկուած մարդիկ ներս խուժեցին տաճարը և կրակ տուին նրան։ Շատ հաւատացեալների նահատակելով, մնացածներին տանջանքների ենթարկելով՝ ստիպում էին նրանց զոհ մատուցանելու հեթանոս աստուածներին։ Երբ նրանք այրում էին քրիստոնեաներին չիկացած երկաթով ու ձգում նրանց արշաւատեղը վայրենի գազանների կերակուր դարձնելով—այդ միջոցին բոլորքեան բարձրաձայն օրհնաբանում էին Աստծուն ասելով, որ Նա էլ տանջուեցաւ Խաչի վրայ իրանց փրկութեան համար և որ իրանք բերկրութեամբ տանջւում և մեռնում են նրա համար։ Պլացիդիան գերիների մէջն էր. այն ժամանակ նրա հայրը, դառնալով նրան, ասաց. «Դու իմ դուստրն ես և պէտք է ինձ լսես. բեր զոհ Արամազդին և հրաժարուիր Քրիստոսից, այն ժամանակ ես կը վերադարձնեմ քեզ հայրական սէրս, դու կ՚ապրես փառաւոր պալատում, ես քեզ կը հագցնեմ հիանալի հանդերձներ և դու քեզ համար ամուսին կընտրես քո ցանկութեան ու

սրտի համաձայն։ Բայց Պլացիդիան պատասխանեց. —«Ես պատրաստ եմ կատարել քո բոլոր պատուէրները և դորա համար վարձատրութիւն չեմ պահանջում, որովհետև գիտեմ, որ աղջիկը պէտք է հնազանդ լինի հօրը. բայց Տէր Աստուածը,—բոլոր մահկանացուների հայրն է՝ և Նրան մենք ամենքս պէտք է լսենք և սիրենք աշխարհումս ամենից առաւել։ Ես չեմ կարող լսել քեզ այն բանում, ինչ որ դէմ է Տիրոջը և Յիսուս Քրիստոս ես երբէք չեմ ուրանալ»։ Այն ժամանակ իշխանը սաստիկ զայրացաւ և հրամայեց իւր աղջկան առիւծների կերակուր դարձնել. բայց առիւծները խոնարհութեամբ պառկեցան աղջկայ ոտների մօտ և չը վնասեցին նրան։ Աղջկայ հայրն այս տեսնելով՝ լաց եղաւ և ասաց. «Այժմ ես էլ հաւատում եմ, որ քրիստոնեաների Աստուածը — աշխարհիս միակ Աստուածն է»։ Դրկելով ու համբուրելով իւր աղջկան, նա շարունակեց՝ «Զաւակս, քո հաւատն ազատեց մեզ երկուսիս»։ Եւ այդ օրուանից նա քրիստոնեայ դարձաւ։

XVII

158 թ. Կայսր Անտոնիոս ՊԻՈՍԸ նստած էր իւր դահի վրայ Հռովմում. դեսպանները աշխարհիս բոլոր ծայրերից մատուցանում էին նրան ընծաներ. ես ընկած էի նորա դանձերում և լսում էի նրան շրջապատողների ձայները, որոնք փառաբանում էին նրա

արժանաւորութիւնները։ Նրա շուրջը բարձրանում էին յաղթական կամարները և մարմարիոնէ փառահեղ պալատները. հարիւրաւոր պճնազարդ ասպետները շրջապատում էին նրա գահը։ Յունաստանից եկած իմաստունները ու բանաստեղծները երգում էին նրա պատուին գովասանական երգեր։ Մինչդեռ երեւելիները, համեստները, հարուստները, աղքատները, գիտունները ու ոգէտները փառաբանում էին նրան, կայսեր դէմքը հետզհետէ մռայլւում էր և ես լսեցի, ինչպէս նա ասաց իւր փեսայ ու գահաժառանգ Մարկոս Աւրելիանոսին. «Ես էլ այնպիսի մեղաւոր եմ, ինչպէս և բոլոր մահկանացուները, և այս արծաթ դրամը ինձնից աւելի երկար կ'ապրի աշխարհումս. ասա ժողովրդին որ ինձ չերկրպագէը, այլ միակ ճշմարիտ Տէր-Աստծուն։ Ոչինչ չէի խնայիլ, եթէ միայն կարողանայի իմանալ՝ թէ ո՞վ է այդ միակ ճշմարիտ Աստուածը»։

XVIII

58 թ. Ես, խեղճ արծաթէ դրամս, նոր էի կըտրուել այդ ժամանակ դրամահատական պալատում Հռովմում։ Իմ մի երեսին դրոշմուած էր կայսեր պատկերը այս վերնագրով՝ ՆԵՐՈՆ։ Կլավդիոսը. Կեսարը և այն ամենքը. որոնք բանացնում էին ինձ, սարսափով էին նայում այս պատկերի վրայ։ Ներոնը լաւ պատանի էր մինչև գահ բարձրանալը, բայց իշխա

նութիւնը մեծ գայթակղութիւն է մարդու համար,
որովհետև ասուած է՝—«Ցուր մեծութիւն, փոքր ե
զհաւատ», և Ներոնը դարձաւ բռնակալ, որին բոլո
դարերը սարսափով են յիշում։ Մի անգամ նա ինդ
Պօպպէյին ընծայեց «—Ներոն, ասաց նրան աղջիկը,
դու մեծ մարդ ես, բայց ափսոս որ քո մօր աղջեցո
թեան տակ ես գտնւում, հրամայիր սպանել նրան
Ներոնը լռում էր. այս խօսքերը սարսափելի թուլ
ցին նրան։—Ի՞նչ է, մի անգամ էլ ասաց նրա
Պօպպէյան, դու չհրամայեցիր թունաւորելու եղբօր
Այն ժամանակ Ներոնը հրամայեց այնպիսի նաւ շ
նել, որը պիտի խորտակուէր ծովում և հրաւիրել
իւր մայր Ագրիպպինային զբօսնելու նաւով։ Նաւ
խորտակուեց, բայց Ագրիպպինան ափը հասաւ և
զատուեցաւ։ Ներոնն այդ բանից յետոյ վախենում
էր հանդիպել մօրը և հրամայեց սպանել նրան. բայ
այս ըռպէից սկսած՝ նա ոչ մի տեղ այլ ևս հանդիպ
չգտաւ։ Այն ժամանակուայ պատմութիւնը լի է սար
սափներով ու ոճրագործութիւններով, զոհերի թ
ւումն էր նոյն ինքն Պօպպէյան։ Մի անգամ ես տե
սայ, թէ ինչպէս ամբողջ Հռովմն այրւում էր, ինք
Ներոնն էր հրամայել կրակ տալ քաղաքը, որ զմայ
լուէր հրդեհի տեսարանով։ Երբ խնդիրը պարզուե
ցաւ և յայտնուեցաւ հրդեհի պատճառը, Ներոնը վա
խեցաւ ամբոխի կատաղութիւնից և իրան անմե
ձևացնելով՝ լուր տարածեց թէ քրիստոնեաներն ե

այրել քաղաքը։ Այդ ժամանակ քրիստոնեաները ժո-
ղովւում էին անտառներում ու քարանձաւներում ա-
օթելու։ Ներոնը հրամայեց բռնել նրանցից մի քա-
նիսին, կարել վայրի գազանների մորթու մէջ և ձը-
գել շների յոշոտման։ Միւսներին կարեցին հասարակ
պարկերում՝ վառուող կուսրով պատելով, որպէս զի
նրանք, ինչպէս լապտերներ, լուսաւորէին հասարա-
կաց հանդէսները։ Ասում են, իբր թէ Պօղոս առա-
քեալը գտնւում էր զոհերի թւում և մարտիրոսական
մահ ընդունեց յանուն Յիսուս Քրիստոսի։ Քրիստոնեա-
ները մեռնում էին գովելով Տիրոջը և տանջանքներ
կրելիս, փառաբանում էին նրան, որ նա արժանաց-
րել է իրանց մարտիրոսական մահ ընդունելու։ Ներ-
ոնն օրէցօր գազանաբար էր վարւում, և վերջ ի
վերջոյ զօրքը ապստամբեց նրանից։ Այն ժամանակ
նա գիշերով փախաւ իւր ստրուկներից մէկի կա-
լուածքը և ինձ էլ հետը տարաւ իւր քսակում։ Ես
լսում էի, ինչպէս կայծակը որոտում էր բռնակալի
գլխին և տեսայ, ինչպէս փայլակը լուսաւորեց նրա
դաժան ճակատը։ Նրա ձին վախենում էր և անցորդ-
ները նրան հանդիպելիս, գիշերուայ խաւարի մէջ
գոչում էին նրա ետևից. «Տեսել ես դու Ներոնին.
Ներոնը պէտք է ոչնչանայ»։ Իսկ Ներոնը սարսում էր
երկիւղից, այնպէս որ մենք, դրամներն էլ, դողում
էինք նրա քսակում։ Երկնչելով մտնել կալուածքի
մեծ դռներովը, նա թաղկացաւ եղեգնուտի մէջ և

երբ ծարան սկսեց տանջել նրան, նա լճացած գեսնից բռնով ջուր էր վերցնում և ագահութեամբ խըմում էր։ Ստրուկը խղճաց նրան, և պատի մէջ մի ճեղք բանալով, ներս թողեց նրան տուն։ Այդ ժամանակ լուր հասաւ, որ թշնամիքն արդէն դռան մօտ են և կամենում են բռնել նրան, որ մահու դատապարտեն բոլոր ժողովրդի աչքի առաջ։ Ներսն մահու չափ գունատուեցաւ և ուզում էր սպանել իրան, բայց չկարողացաւ, այնպէս որ նրա ստրուկը ստիպուած էր օգնել նրան—խրելով դաշոյնը նրա կոկորդը։ Այդպիսի սարսափելի կերպով են վերջացնում բռնակալներն իրենց կեանքը։

Աստծու բարկութիւնը խորտակում է նրանց և մարդոց անէծքը ուղեկցում է նրանց յիշատակը դարուց ի դարս։

«Ես պատմեցի քեզ լուրաքանչիւր դարեշրջանից մի դէպք մինչ այն դարեշրջանը, երբ Քրիստոսի աշակերտներն ապրում և մեռնում էին երկրիս վրայ, որպէս զի յետոյ յարութիւն առնեն նրա հետ միասին յաւիտենական կեանքում», —ասաց արծաթէ դըրամը։ Ես ոչ այլ ինչ եմ, եթէ ոչ մի իր, որ ոչնչանում է և ձեռքից ձեռք է անցնում հազար տարուայ ընթացքում. բայց քո անմահ հոգին, որ երկրիս վրայ կարճ ժամանակ է ապրում, յաւիտենականութեան մէջ ինձանից աւելի երկար ու երկար կապրէ։

Այդ պատճառով էլ, սիրելի մանուկս, ապրիր աշխարհումս, որ նախապատրաստես քո հոգին յաւիտենական կեանքի համար և մտաբերիր այն, ինչ որ քեզ պատմեցի այն մարդոց մեղքերի մասին, որոնք քեզնից առաջ էին ապրում։ Ինքդ ապրիր այնպէս, որ Աստծու ողորմութիւնը և մարդկանց օրհնութիւնը ուղեկցէին քեզ և գերեզմանից յետոյ էլ։ Կարելի է, ես դարձեալ—մի հազար տարուց յետոյ էլ որ եմ երեխայի արկղում գտնուիմ, և ուրեմն միջոց տուր ինձ պատմել նրան մի որ և է լաւ բան քո և քո դարեշրջանի մասին։ Թող նա իմանայ, որ քո ժամանակի երեխաներն առաքինի ու ազնիւ մարդիկ դարձան, որոնք երկիւղած էին աւ Աստուած, սիրում էին իրանց հայրենիքը, ապրում էին ինչպէս հարկն է և մեռնում էին ճշմարտութեան համար»։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Հ. Ազգային Գրադարան
7/XI—1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1153

344

Մինչ սոյն 1904 թ. Յունուարը լոյս են տեսել իմ հետեւեալ աշխատութիւնները՝

Ա. Մանկավարժական՝

1. ՋՕՆ ՍՏԻՒԱՐՏ ԲԼԷԿԿԻ, պրոֆէսսոր. «ՄՏԱՒՈՐ, ՖԻԶԻՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՆՖԷՆԱԿՐԹՈՒԹԻՒՆ» (երկրորդ տպագրութիւն) . . . . . 60 կ.
2. Ժ. ԲԱՄԲՕՍՍՕՆ, պրոֆէսսոր. «ՄԱՅՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԻ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ» . . . . . 40 կ.
3. ԼՈՒԻԶԱ ԲԻԻԽՆԷՐ. «ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄԸ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ» . . . . . 40 կ.
4. Ա ԳԱԲՐԻԷԼԻ. պրոֆէսսոր «ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ» . . . . . 60 կ.

Բ. Դրական՝

1. Գ. ԷԲԵՐՍ՝ «Փարաւոնի աղջիկը» պատմ. վէպ . . . 80 կ.
2. ՄԱՐԿ ՏՈՒԷՆ. «Իշխանն ու աղքատը» պատմ. վէպ . . 1 ռ—
3. ԷԴԳԱՐ ՊՕ. «Ոսկի բզէզ» Ժողովրդական վէպ . . . 20 կ.

Գ. Մանկական՝

1. ԲԱՈՒԷՆ. «Փայլուն կոպէկ» երկրորդ տպագր. . . 25 կ.
2. ԱՆԴԵՐՍԷՆ «Անկամալոյծ» . . . . . 15 կ.
3. ՏՕՊԷԼԻՈՒՍ. «Աբծաթ մանէթի պատմութիւնը» . . 15 կ.
4. ՊԱՊԻ ՁԵՌՆՈՑՆԵՐ. (երկրորդ տպագրութիւն) . . 10 կ.
5. ԿԱՐՄԷՆ ՍԻԼՎԱ. Օմոլ . . . . . 8 կ.

Դ. Թատերական՝

1. «ԱԶՆԱՆԱՑԻՆ ԵՐԿՈՑ ԳԻՒՂՈՒՄ», վոդէվիլ 1 գործողութեամբ . . . . . 25 կ.
2. «ԺԱՆՕ ԵՒ ԺԱՆԷՏ», օպերա.—վոդէվիլ 1 արար. . . 40 կ.

Ցանկացողները դիմում են Թիֆլիսի գրավաճառներին եւ բարգմանչին հետեւեալ հասցեով՝—*Учителю Армянской духовной Семинаріи Персиянъ, Григорію Шах-Будагянцъ*

85
S-86